ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ՍՊԻՏԱԿ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՍԱՐԱՀԱՐԹ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղը հիմնադրվել է 1829-30-ական թվականներին՝ գաղթելով պատմական Հայաստանի Բասենի Նահանգի Էյքիբադ գյուղից, մեր պապերը հանգրվանել են այժմյան բնակատեղիից 2-3 կմ հյուսիս-արևմուտք գտնվող մի բնակավայրում (այժմ՝ Գոգարան համայնք); Մի քանի տարի անց հիմնել են նոր այժմյան բնակավայրը: Առաջին տները կառուցվել են Մեծ աղբյուր կոչվող տարածքում: Այս տարածքում էր գտնվում նաև Հին եկեղեցին (Հին ժամը), որը ամբողջովին ավերվեց 1988թ Սպիտակի երկրաշարժի հետևանքով: Այստեղ է գտնվում նաև Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակին կառուցված հուշարձանը: Գյուղում կառուցված է համայնքային կենտրոն, որտեղ էլ գործում են տեղական ինքնակառավարման մարմինները: Գյուղում գործում է 1884 թվականին կառուցված Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին: Եկեղեցին վերականգնվել է 2003-04 թվականներին Մայր Աթոռի կողմից՝ սարահարթցի բարերար, ամերիկաբնակ Աշոտ Մարտիրոսյանի (Տելեմագ) կտակած միջոցներով: Եկեղեցուց 50-60 մետր դեպի հյուսիս գտնվում է հին գերեզմանոցը, որը ունի ցանկապատման ու պահպանման կարիք:

Գյուղում գործում է միջնակարգ դպրոց՝ 131 աշակերտով և 24 ուսուցչով: Հիմնականում համալրված է մանկավարժական կադրերով: Դպրոցում գործում է նաև նախադպրոցական խումբ: Դպրոցի շենքը կառուցվել է երկրաշարժից հետո և շահագործման է հանձնվել 1993 թվականին: Դպրոցի շենքի վիճակը բավարար է: Սակայն մեծ չափերի և անհարմար դիրքի պատճառով ձմռանը դժվար է տաքացվում: Զուգարանը և սանհանգույցը գտնվում են բարվոք վիճակում: Չի ջեռուցվում մարզադահլիճը: Ունի ընդարձակ բակ և հարմարավետ խաղահրապարակ:

Գյուղում չի գործում մշակույթի տուն, չկան մշակութային կազմակերպություններ:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻ

Գտնվում է Գոգարան գետի ափին: Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 27 կմ հյուսիս-արևմուտք:
Սարահարթ գյուղը գտնվում է Բազումի լեռնաշղթայի Չքնաղի լեռներ կոչվող բազուկի արևմտյան լանջերին: Սպիտակ քաղաքից 8 կմ հյուսիս–արևմուտք, բլրապատ ու թեք հարթավայրում, ծովի մակարդակից 1500 մետր բարձրության վրա, զուրկ է բնական և արհեստական անտառներից:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	250
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (^{0}C)	5
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (^{0}C)	25

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Սպիտակ

2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	10
2.2) մայրաքաղաքից (կմ)	110
2.3) մարզկենտրոնից (կմ)	35
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	60
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	10
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	2
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	2
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1725
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	28.91/2891.04
6.Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Գոգարան,Շենավան, Շիրակամուտ,Գեղասար
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	098829156,099424114
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	այո, 1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	1323
2. Գրանցված ծնունդների քանակը	12
2.Մահացության դեպքերի քանակը	9
3.Ամուսնությունների քանակը	5
4. Ամուսնալուծությունների քանակը	1
5. Տնային տնտեսությունների թիվը	382
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	98
7. Կենսաթոշակառուների քանակը	167
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	47

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0

3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	16891
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	266

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	2718,88
2. Բնակավայրերի հողեր (հա)	105,62
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	11,71
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	8,04
5. Հատուկ նշանակության	0
6. Հատուկ պահպանվող տարածքների	1,81
7. Անտառային	36,12
8. Ջրային	8,85
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	572
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	400
11. Խոզերի գլուխաքանակը	21
12. Գյուղատնտեսական տեխնիկա	12
12.1 տրակտորներ (քանակը)	10
12.2 կոմբայններ (քանակը)	2
13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	382

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	4
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	9
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	24
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	23
6.2 Էքսկավատորների քանակը	0
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	2,9
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	ոչ
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	4
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	2

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**

1.Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի խմելու ջրի ներքին ցանցի կառուցում (մոտ 6կմ) և ջրամբարների վերանորոգում:	Հիմնախնդիրը ներկայացվել է 2026 թվականի սուբվենցիոն ծրագրով:
2.Սպիտակ համայնքի Սարահարթ բնակավայրի միջբնակավայրային փողոցների սալարկում և ասֆալտապատում՝ մասնակի ջրահեռացմամբ (որոշ փողոցներում ջրահեռացումը առկա է): Անհրաժեշտ է սալարկել հետևյալ փողոցները՝ 13-րդ փողոց, երկարությունը՝ 494մ, 16-րդ փողոց, երկարությունը՝ 300մ, 10-րդ փողոց, 2-րդ նրբանցք, երկարությունը՝ 125մ, 12-րդ փողոց, երկարությունը՝ 315մ: Անհրաժեշտ է ասֆալտապատել հետևյալ փողոցները՝ 11-րդ փողոց, երկարությունը՝ 365մ, 18-րդ փողոց, երկարությունը՝ 155մ, 17-րդ փողոց, երկարությունը՝ 245մ, 14-րդ փողոց, երկարությունը՝ 393մ, 3-րդ փողոց, երկարությունը՝ 360մ:	Ծրագիրը ընդգրկել սուբվենցիոն ծրագրերի մեջ:
3.Սպիտակ համանքի Սարահարթ բնակավայրի ոռոգման ջրամբարի կառուցում, ոռոգման ցանցի ընդլայնում և պոմպակայանից սպասարկվող խողովակների և փականների վերանորոգում կամ փոխարինում:	Ծրագիրը ընդգրկել սուբվենցիոն ծրագրերի մեջ և բնակավայրի հողային առուները փոխարինել բետոնե վաքերով, մետաղյա և պլաստմասե խողովակներով:
4.Բնակավայրում գոյություն ունեցող մարզադաշտի ռետինե շերտի իրականացում, վազքուղու բետոնացում, նստատեղերի, սանհանգույցի և հանդերձարանի կառուցում:	Ծրագիրը ընդգրկել սուբվենցիոն ծրագրերի ցանկում:
5.Մշակույթի կենտրոնի կառուցում	Ծրագիրը կարելի է իրականացնել սուբվենցւոն ծրագրով, կամ հիմնադրամների հետ համագործակցելով: